ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 33-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31.01.2022Թ. N 31-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի համայնքի ղեկավարի 31.01.2022թ. «Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղում գտնվող բնակելի տան վերակառուցումը հյուրատան և հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու թույլտվություն տալու, Ալավերդի համայնքի ղեկավարի 20.01.2022թ. N 20-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «Փոփոխել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 18-րդ փողոց, 2 բնակելի տուն հասցեում գտնվող, Վաչագան Իսոյանին սեփականության իրավունքով պատկանող, բնակելի տան գործառնական նշանակությունը և այն հաշվառել հասարակական նշանակության՝ որպես հյուրատուն օգտագործելու, քանի որ օրենքով սահմանված կարգով բնակելի տան վերակառուցման համար սեփականատիրոջը տրամադրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք, շին թույլտվություն, օրենքի սահմանված կարգով շինարարությունն ավարտվել է և տրամադրվել շահագործման թույլտվություն»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 02
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 34-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, 1/3 ՇԵՆՔ, N 47-48 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 06.04.2007թ. Հ 23-Ա որոշումը, Ալավերդու քաղսովետի կոմունալ սպասարկման բարեկարգման գրասենյակի 25.09.1966թ. տրված N 406 օրդերը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 16.09.2015թ. տրված N Ա-437 արխիվային քաղվածքը, Ալավերդու քաղաքապետի 23.09.2015թ. N 219-Ա որոշումը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲ ընկերության տնօրենի կողմից 10.01.2022թ. տրված N 0/40 տեղեկանքը, Թամարա Հմայակի Անդրեասյանի դիմումը, բնակ. հանձնաժողովի 21.01.2022թ. N 1 արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող՝ ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 1/3 շենք, N 47-48 բնակարանը /93.4 քմ ընդհանուր մակերեսով/ 46700 դրամով, ուղղակի վաճառքով, օտարել բնակարանի վարձակալներ Թամարա Հմայակի Անդրեասյանին և Վահրամ Վիլիկի Գալինյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բնակարանի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2022թ. փետրվարի 02
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 35-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ, ՊԱՀԱԿԱԿԵՏԸ, ՊԱՐԻՍՊՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10.10.2018Թ. N 329-Ա ԵՎ 07.01.2022Թ. N 5-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.06.2006թ. N 1084-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով համայնքային սեփականության N 09102019-06-0026 վկայականը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 22.12.2009թ. N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 30.11.2021թ. N 1/փ-352 դրական եզրակացությունը, համայնքի ավագանու 03.12.2021թ. N 105-Ա որոշումը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Միավորել համայնքի սեփականություն հանդիսացող, Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի Թբիլիսյան խճուղի 5/1 հասցեում գտնվող, 06-002-0113-0003 կադաստրային ծածկագրով, 0,0597 հա մակերեսով N 09102019-06-0026 վկայականով հողամասը և ՀՀ կառավարության 29.06.2006թ. N 1084-Ն որոշմամբ անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցված 06-002-0162-0003 կադաստրային ծածկագրից առանձնացվող 0.2803 հա մակերեսով հողամասը:
2. Միավորված՝ 0.34 հա մակերեսով, կադաստրային քարտեզում 06-002-0162-0016 ծածկագրով ծածկագրված հողամասում «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից նախագծային շեղումներով ինքնակամ կառուցված 1155.2քմ արտաքին մակերեսով (964.7 քմ ներքին մակերեսով) հասարակական նշանակության մանկապարտեզի, 29.64 քմ արտաքին մակերեսով պահակակետի (18.40 քմ ներքին մակերեսով), 33,50 քմ մակերեսով պարիսպների նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
3. Օրինականացնել համայնքային սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի քաղաքի Թբիլիսյան խճուղում գտնվող, 06-002-0162-0016 կադաստրային ծածկագրով, 2018 թ. նախագծային շեղումներով ինքնակամ կառուցված, հասարակական նշանակության 1155.2 քմ արտաքին մակերեսով (964.7 քմ ներքին մակերեսով) մանկապարտեզը, 29.64 քմ արտաքին մակերեսով (18.40 քմ ներքին մակերեսով) պահակակետը, 33,50 քմ մակերեսով պարիսպները՝ սպասարկման համար զբաղեցրած 0.34 հա մակերես ունեցող հողամասով:
4. Ինքնակամ շինություններով ծանրաբեռնված՝ 06-002-0162-0016 կադաստրային ծածկագրով, 0.34 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ հիմք ընդունելով միջգերատեսչական հանձնաժողովի 30.11.2021թ. N 1/փ-352 դրական եզրակացությունը:
5. Նշված հողատեսքի փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում՝ համայնքի հողային հաշվեկշռում փոփոխությունն ընդգրկելու համար:
6. Շինությունների զբաղեցրած 0.34 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
7. Միավորված՝ 0.34 հա մակերեսով 06-002-0162-0016 կադաստրային ծածկագրում գտնվող մանկապարտեզին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թբիլիսյան խճուղի, 5/2 փոստային հասցե:
8. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված շինությունների նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
9. Հանձնարարել համայնքապետարանի քաղաքաշինության գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝

«Տաշիր» բարեգործական հիմնադրամին, օրինականացված մանկապարտեզը, պահակակետը, պարիսպները և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

10. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 10.10.2018թ. «Փոստային հասցե տրամադրելու մասին» N 329-Ա և 07.01.2022թ. «Ինքնակամ կառուցված մանկապարտեզը, պահակակետը, պարիսպները համայնքային սեփականության իրավունքը ճանաչելու, օրինականացնելու, հողատեսքի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու, փոստային հասցե տրամադրելու և ալավերդի համայնքի ղեկավարի 10.10.2018թ. N 329-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 5-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 03
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 36-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23.11.2021Թ. N 347-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի համայնքի ղեկավարի 23.11.2021թ. «Սեփական տնամերձ հողամասում գտնվող բնակելի տան ինքնակամ վերակառուցումը որպես հյուրանոց և ինքնակամ կառուցված կաթսայատունն ու պարիսպն օրինականացնելու, շինության գործառնական նշանակությունը փոփոխելու, Ալավերդի համայնքի ղեկավարի 22.10.2021թ. N 326-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 347-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

Օրինականացված 12 հատ միջնորմների, 7 հատ դռան, 2 հատ պատուհանի ձևափոխությունների համար՝ 23100 (քսաներեք հազար հարյուր) դրամ, 140.2 քմ արտաքին մակերեսով հյուրանոցի համար՝ 288252 (երկու հարյուր ութսունութ հազար երկու հարյուր հիսուներկու) դրամ, 47.8 քմ արտաքին մակերեսով կաթսայատան համար՝ 98277 (իննսունութ հազար երկու հարյուր յոթանասունյոթ) դրամ, 9.7 քմ արտաքին մակերեսով պարիսպի համար՝ 19943 (տասնինը հազար ինը հարյուր քառասուներեք) դրամ, սահմանված արժեքներով, սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 03
ք. Ալավերդի